

**«ԵՍ ԳՈՐԾՈՒՄ ԵՄ ԵՎ ԳԻՏԵՄ, ՈՐ ԳՈՐԾՈՂԸ ԵՍ ԵՄ».
Ի՞ՆՉ Է ԱԳԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՅՆ ԴՐՍԵՎՈՐՎՈՒՄ**

ԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հոդվածում վերլուծվում են ագենտության ուսումնասիրության նեյրոգիտական և հոգեբանական հիմնական տեսական մոտեցումները: Ներկայացված են այս հիմնախնդրով զբաղվող տարբեր հեղինակների սահմանումներ:

Նեյրոգիտական մոտեցումները, հիմնված լինելով փորձաքարական հետազոտությունների վրա, ագենտությունը համարում են ուղեղային հատուկ ակտիվության արդյունք՝ ընկած մարդու կամային շարժողական ակտիվության հիմքում: Իսկ արդեն ագենտության հոգեբանական տեսություններն այն դիտարկում են անձի ակտիվության ավելի լայն համատեքստում՝ միջավայրի հետ փոխազդեցության տեսանկյունից: Փորձ է արվել ուրվագծելու ագենտության դրսևորման հիմնական առանձնահատկությունները, ինչը կարող է հիմք դառնալ վերջինիս էմպիրիկ ուսումնասիրության համար:

Բանալի բառեր – ագենտություն, ագենտ, գլխուղեղի շրջաններ, առաջընթացային և հետընթացային ագենտություն, ինտենցիոնալություն, գործողության արդյունքների կանխատեսում և վերահսկում

Առօրյա կյանքում մենք անընդհատ կատարում ենք տարբեր նպատակաուղղվածության գործողություններ, որոնց մասին առանձնապես չենք մտորում. օրինակ՝ ջուր ենք լցնում բաժակի մեջ և խմում՝ մեր ծարավը հագեցնելու նպատակով կամ՝ ինչ-որ տեղ գնալու համար քայլում ենք, և այսպես շարունակ:

Երբ ես գիտակցում եմ, որ քայլում եմ, իմ գիտակցումն առնչվում է երկու իրողության գիտակցման. 1) քայլելու գործողությունը և 2) մարդը, որը քայլում է, ես եմ: Այս երկու տեսանկյունները տարբերվում են միմյանցից, ընդ որում՝ հենց ագենտության զգացման միջոցով եմ ես գիտակցում, որ իմ գործողությունների հեղինակը ես եմ¹: Ագենտության զգացումն այն բանի նախառեֆլեքսիվ կամ իմպլիցիտ գիտակցումն է, որ գործողություն կատարողը կամ մտադրության հեղինակը ես եմ: Այլ կերպ ասած՝ ագենտն ունի կամային գործողություններ կատարելու կարողության զգացում. հենց ինքն է այդ գործողությունները ձեռ-

¹ Sté u **Vignemont F., Fourneret P.** (2004). The sense of agency: A philosophical and empirical review of the “Who” system. *Consciousness and Cognition* 13, էջ 1–19:

նարկողը, իրականացնողն ու վերահսկողը²:

Ազենտությունը բազմաբնագավառային հետազոտությունների առարկա է և ներկայումս լայնորեն ուսումնասիրվում է ինչպես հասարակագիտական, այնպես էլ համակարգչային գիտությունների (Computer science) շրջանակում: Այս հոդվածը փորձ է՝ ներկայացնելու ազենտության ներդրողիտական և հոգեբանական ուսումնասիրության տարբեր տեսական մոտեցումներ և ուրվագծելու վերջինիս դրսևորման հիմնական առանձնահատկությունները:

Ներդրողիտական ուսումնասիրությունները³ ցույց են տալիս, որ գլխուղեղի մի շարք շրջաններ կապված են ազենտության զգացման հետ, ինչպես օրինակ՝ օժանդակ շարժողական կեղևը (supplementary motor area), ուղեղիկը (cerebellum), հետին գագաթնային կեղևը (posterior parietal cortex), կողային հարձակատային կեղևը (lateral prefrontal cortex), վերին տեսողական կեղևը (higher visual cortex) և կղզակը (insula): Ազենտության ուսումնասիրության համեմատական մոդել (Comparator model) ընդգծում է գործողության կատարման ընթացքում զգայաշարժողական տեղեկատվության մշակման կարևորությունը տվյալ գործողության կատարումը սեփական ես-ին կամ ուրիշին վերագրելու առումով: Գլխուղեղը համեմատում է գործողության կանխատեսելի և ակտուալ հետևանքները. վերջինիս համապատասխանության դեպքում ազենտությունը վերագրվում է սեփական ես-ին, իսկ անհամապատասխանությունը ենթադրում է, որ այլ ազենտ է պատճառավորել գործողությունը⁴: Այս դեպքում ազենտության զգացումը և հատկապես ազենտության մասին դատողությունները մեծապես կախված են գործողության կանխատեսված և ակտուալ զգայական հետևանքների (ան)համապատասխանության աստիճանից⁵: Ժամանակային ազդակները կարևոր դեր ունեն գործողության վերագրման հարցում. գործո-

² Տե՛ս **Gallagher, S.** (2000). Philosophical conceptions of the self: Implications for cognitive science. *Trends in Cognitive Sciences*, 4(1), էջ 14–21:

³ Տե՛ս **Ryu Ohata, Tomohisa Asai, Hiroshi Kadota, Hiroaki Shigemasa, Kenji Ogawa, Hiroshi Imamizu** (2020). Sense of Agency Beyond Sensorimotor Process: Decoding Self-Other Action Attribution in the Human Brain. *Cerebral Cortex*, 30 (7), էջ 4076–4091, <https://doi.org/10.1093/cercor/bhaa028>: Տե՛ս ավելին՝ **Tsakiris M, Longo MR, Haggard P.** (2010). Having a body versus moving your body: neural signatures of agency and bodyownership. *Neuropsychologia.*, 48, էջ 2740–2749: **Beyer, F., Sidarus, N., Fleming, S., & Haggard, P.** (2018). Losing Control in Social Situations: How the Presence of Others Affects Neural Processes Related to Sense of Agency. *eNeuro*, 5(1), ENEURO.0336-17.2018. <https://doi.org/10.1523/ENEURO.0336-17.2018>:

⁴ Տե՛ս **David, N., Newen, A., & Vogeley, K.** (2008). The "sense of agency" and its underlying cognitive and neural mechanisms. *Consciousness and cognition*, 17(2), էջ 523–534. <https://doi.org/10.1016/j.concog.2008.03.004>:

⁵ Տե՛ս **Sato, A., Yasuda, A.** (2005). Illusion of sense of self-agency: Discrepancy between the predicted and actual sensory consequences of actions modulates the sense of self-agency, but not the sense of self-ownership. *Cognition*, 94(3), էջ 241–255: **Fourneret, P., Jeannerod, M.** (1998). Limited conscious monitoring of motor performance in normal subjects. *Neuropsychologia*, 36(11), էջ 1133–1140:

դությունը նախաձեռնելու ժամանակը թույլ է տալիս արդյունքի ժամանակի հստակ կանխատեսում⁶, հետևաբար գործողությունների վիզուալ հետադարձ կապի ցանկացած ժամանակային անհամապատասխանությունն նվազեցնում է ազենտության զգացումը⁷:

Զգայաշարժողական համակարգի տարբեր ազդանշաններ, որոնք հիմք են ազենտության զգացման համար, հասանելի են տարբեր ժամանակահատվածներում. նախաշարժողական ազդանշաններն առկա են գործողությունից առաջ, մինչդեռ զգայական հետադարձ կապի ազդանշանները գործողության կատարումից և նրա արդյունքից հետո: Հետադարձ կապի ազդանշանների վրա հավելյալ ազդեցություն ունի գործողության և նրա արդյունքի պատճառահետևանքային շղթայի ցանկացած հետաձգում, ինչպես նաև աֆերենտ զգայական տեղեկատվություն ստանալու և մշակելու ցանկացած հետաձգում: Համեմատական մոդելն ըստ էության գործ ունի ժամանակային անհամաձայնության հետ՝ հետաձգելով առաջնային մոդելի թողարկումը մինչև այն համեմատելի լինի հետաձգված արդյունքի հետադարձ կապի հետ: Դրա համար էլ ազենտության զգացումը կարող է հաշվարկվել միայն այն բանից հետո, երբ հետաձգված արդյունքի հետադարձ կապը հասնի համեմատականին: Դա ենթադրում է, որ մարդիկ ազենտության զգացումը փորձառում են միայն հետընթացային (ռետրոսպեկտիվ) իրադարձությունից հետո⁸: Այսպիսով, գլխուղեղը ստեղծում է ազենտության զգացում սեփական գործողությունների հեղինակայնության վերաբերյալ հետընթացային եզրակացությունների միջոցով՝ չունենալով ոչ մի ուղղակի հասանելիություն գործողությունների իրական հիմքերին կամ չօգտագործելով այդ ազդանշաններն ազենտության զգացումը հաշվարկելու համար:

Թեև համեմատական մոդելի շրջանակում ընդգծվում է ազենտության հետընթացային բաղադրիչը, այնուամենայնիվ որոշ ուսումնասիրություններ⁹ ցույց են տալիս, որ ազենտության զգացումը կախված է նաև առաջընթացային (պրոսպեկտիվ) ազդանշաններից. սեփական գործողությունների հեղինակայնության փորձառությունը կապված է այդ գործողությունների արդյունքների կանխատեսման հետ, և ոչ թե պարզապես ազենտության մասին եզրակացնելու, երբ գործո-

⁶ Տե՛ս **Walsh, E., Haggard, P.** (2013). Action, prediction, and temporal awareness. *Acta Psychol.* (Amst.) 142, էջ 220–229, **Williams, S. R., Shenasa, J., Chapman, C. E.** (1998). Time course and magnitude of movement-related gating of tactile detection in humans. I. Importance of stimulus location. *J. Neurophysiol.* 79, էջ 947–963:

⁷ Տե՛ս **Haggard, P.** (2017). Sense of agency in the human brain. *Nat Rev Neurosci* 18, էջ 196–207. <https://doi.org/10.1038/nrn.2017.14>:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 202:

⁹ Տե՛ս ավելին՝ **Wegner, D. M.** (2002). *The Illusion of Conscious Will*, MIT Press, 2002: **Moore, J., Haggard, P.** (2008). Awareness of action: Inference and prediction. *Conscious. Cogn.* 17, էջ 136–144:

ղության արդյունքները հայտնի են¹⁰: Այս տեսակի ուսումնասիրություններում¹¹ նշվում է ազենտության փորձառության համար գործելու մտադրության (ինտենցիայի) կարևորության մասին: Գործելու մտադրությունն առանձին չէ գործողությունից և ներկայացնում է վերջինիս նպատակը: Այդ իսկ պատճառով, եթե գործելու մտադրությունն առկա է, գործողություններն ու գործողության հետևանքները մեծ հավանականությամբ կվերագրվեն ես-ին, եթե նույնիսկ արտաքին ազդեցությամբ են առաջացել¹²: Ստացվում է, որ ազենտության զգացման համար կարևոր են և՛ գործողության ակնկալվող արդյունքի, և՛ ակտուալ արդյունքի համապատասխանությունը, ինչպես նաև՝ գործելու մտադրությունը՝ ակնկալվող արդյունքին հասնելու համար գործելու մղումը:

Հիմնված լինելով փորձարարական հետազոտությունների վրա՝ ազենտության ուսումնասիրության ներդրողական մոտեցումները ցույց են տալիս, որ վերջինս մարդու բնույթի տրանսցենդենտ բնութագիր չէ, այլ ուղեղային հատուկ ակտիվության արդյունք, որն ընկած է կամային շարժողական վերահսկողության հիմքում: Իսկ արդեն ազենտության հոգեբանական տեսություններն այն դիտարկում են անձի ակտիվության ավելի լայն համատեքստում՝ միջավայրի հետ փոխազդեցության տեսանկյունից:

Այսպես օրինակ՝ Ալբերտ Բանդուրան ազենտությունը սահմանում է որպես հնարավորություն՝ կանխամտածված ազդելու միջավայրային իրադարձությունների գործառության և ընթացքի վրա¹³: Ըստ նրա՝ համոզմունքը, որ յուրաքանչյուրը կարող է հաջողությամբ ազդել իրադարձությունների ընթացքի վրա, կարևորագույն պայման է դա անելու համար. «Եթե մարդիկ չեն հավատում, որ կարող են իրենց գործողություններով հանգել արդյունավետ հետևանքների, նրանք գործելը շարունակելու քիչ խթան ունեն դժվարությունների հաղթահարման համար: Թեև այլ գործոններ մոտիվացնող նշանակություն ունեն, կարևոր է համոզվածությունը, որ յուրաքանչյուրը կարող է փոփոխություններ առաջացնել իր գործողություններով»¹⁴:

Ազենտությունը պայմանավորված է ինչպես արտաքին, այնպես էլ

¹⁰ Տե՛ս **Haggard, P.** (2017). նշվ. աշխ., էջ 203:

¹¹ Տե՛ս ավելին՝ **Haggard, P., Clark, S., & Kalogeras, J.** (2002). Voluntary action and conscious awareness. *Nature Neuroscience*, 5(4), էջ 382–385: **Haggard, P., & Clark S.** (2003). Intentional action: Conscious experience and neural prediction. *Consciousness and Cognition*, 12, էջ 695–707:

¹² Տե՛ս **David, N., Newen, A., & Vogeley, K.** (2008). նշվ. աշխ., էջ 528:

¹³ Տե՛ս **Bandura A.** (1999). A Social Cognitive Theory of Personality. In Pervin L. & John O. (Ed.), *Handbook of personality* (2nd ed., էջ 154-196). New York: Guilford Publications. (Reprinted in Cervone D. & Shoda Y. [Eds.] *The coherence of personality*. New York: Guilford Press), էջ 2:

¹⁴ **Bandura, A.** (2008). An agentic perspective on positive psychology. In S. J. Lopez (Ed.), *Positive psychology: Exploring the best in people, 1. Discovering human strengths*. Praeger Publishers/Greenwood Publishing Group, p. 167-196.

ներքին գործոններով: Եթե մարդիկ զգում են, որ ընդունակ են որոշակի գործողությունների, նրանք ամենայն հավանականությամբ կանեն դա: Նրանք կարող են ազդել իրենց դատողությունների և գործողությունների վրա, փոխել դրանք: Մարդկանց արդյունավետությունը, իհարկե, սահմանափակվում է ինչպես արտաքին միջավայրով, այնպես էլ վարքային առանձնահատկություններով: Այստեղ կարելի է նշել երեք փոխպայմանավորող գործոնների մասին՝ անձնային, վարքային և միջավայրային¹⁵:

Ազենտության վերաբերյալ այս մոտեցմամբ Բանդուրան զարգացնում է իր ավելի վաղ ինքնաարդյունավետության տեսությունը: Ինքնաարդյունավետությունն ընդգրկում է մարդկանց մոտիվացիան, ջանքերի մակարդակը և համատեղությունը: Իրացված արդյունավետությունը նշանակում է, որ մարդիկ «հավատում են իրենց ընդունակությանը՝ վերահսկելու իրենց գործառնությունը և իրենց կյանքին վերաբերող իրադարձությունները»¹⁶: Երկրորդ եղանակը, որով մարդիկ դրսևորում են իրենց անձնային ազենտությունը, նպատակներն են ու կանխատեսման ընդունակությունը: «Մարդիկ կանխատեսում են իրենց հետագա գործողությունների հետևանքները, նրանք դնում են նպատակներ և կազմում ցանկալի արդյունքներ ենթադրող պլաններ»¹⁷: Սպասվելիք արդյունքները ձևավորում են ազենտության դրսևորման երրորդ մեխանիզմը՝ մարդկանց ընդունակությունը՝ կանխատեսելու հետագա (պրոսպեկտիվ) գործողությունների հնարավոր արդյունքները¹⁸: Մարդկանց կողմից իրենց արդյունավետության ընկալումն ազդում է կանխատեսական սցենարների տեսակների վրա, որոնք նրանք կառուցում են և կրկնում: Ուժեղ ինքնաարդյունավետությամբ մարդիկ ավելի հեշտ են «հավատում» դրական արդյունքներին: Վերջապես՝ ինքնաարդյունավետության համոզմունքները, նպատակները, կանխատեսումային հետևանքները ձևավորում են հետադարձ կապ (կանխատեսականությունը հաճախ մեզ «փրկում է» ապագա վտանգներից)¹⁹: Ինքնաարդյունավետությունը հաճախ հավասարաբժեք օգտագործվում է ազենտության հետ: Բայց այն տարբերվում է ազենտությունից. վերջինս վարքային կոնցեպտ է («ի՞նչ կարող եմ անել»), այն դեպքում, երբ ազենտությունը և՛ վարքային, և՛ հոգեբանական կոնցեպտ է (ոչ միայն «ի՞նչ կարող եմ անել», այլև «ի՞նչ եմ մտածում՝ ինչ կարող եմ անել»): Ինքնաարդյունավետությունը կարող է դիտարկվել որպես ազենտութ-

¹⁵ Տե՛ս **Bandura, A.** (1997). *Self-efficacy: The exercise of control*. W H Freeman/Times Books/ Henry Holt & Co:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ **Bandura A.** (1989). Human agency in social cognitive theory. *American psychologist*, p. 1179 (1175-1184).

¹⁸ Տե՛ս **Alkire S.** (2005). Subjective quantitative studies of Human Agency. *Social Indicators Research*, 74 (1), էջ 238 (217-260):

¹⁹ Տե՛ս **Bandura, A.** (1989). նշվ. աշխ.:

յան վարքային բաղադրիչ: Ըստ Բանդուրայի՝ ինքնաարդյունավետությունը կենտրոնական դեր է կատարում անհատական ազենտության մեջ՝ ազդելով մտածողության պատտերնների, հուզական դրդումների և մոտիվացիայի վրա. «Այն, ինչ մենք անում ենք, ազդում է այն բանի վրա, թե ինչ ենք մտածում՝ ինչ կարող ենք անել»²⁰:

Այս կերպ ազենտության մասին Բանդուրայի մոտեցումն ընդգծում է այն ուղիները, որոնցով մարդիկ վերահսկում են իրենց կյանքը՝ արձագանքելով միջավայրին: Նրա համար ազենտությունը նպատակաուղղված է, կառուցողական: Վերջինս ներառում է անհատի գործողությունների հետևանքների կանխատեսումը, ընդունակությունների գնահատումը, ազդեցության կարգավորումը և նախաձեռնողականությունը:

Ա. Մենի աշխատանքում ազենտությունը սահմանվում է որպես «մարդկանց ընդունակությունը՝ գործելու այն նպատակներին համապատասխան, որոնք նշանակալից են իրենց համար, և ազատության այս ասպեկտը, ըստ նրա, դրական սոցիալական փոփոխության հիմնական բաղադրիչ է. մարդիկ պետք է ակտիվորեն ներառվեն տրված հնարավորության մեջ իրենց ճակատագիրը ձևավորելու համար»²¹: «Ազենտությունը մարդու ազատությունն է՝ հասնելու իր համար նշանակալից նպատակներին և արժեքներին: Այն կարևոր ասպեկտ է՝ գնահատելու համար, թե ինչ կարող է անել մարդն իր համար «լավի», «օգտակարի» տեսանկյունից, ընդունակություն՝ գործելու և փոփոխություններ կատարելու սեփական նպատակներին, արժեքներին և խնդիրներին համապատասխան»²²: Մենն առավելապես կենտրոնացրել է իր ուշադրությունը մարդկանց ընդունակության վրա՝ ազատորեն ընտրելու, և դրական ազատության վրա²³: Այստեղ, իհարկե, կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, թե ազատորեն ընտրություն կատարելու համար կյանքի որակական և քանակական տարբերակների նկատմամբ ինչպիսի հասանելիություն ունի մարդը: Ազենտության դրսևորման տեսանկյունից հենց հետաքրքիր է, թե ինչպես է գործում մարդն ընտրության տարբերակների հասանելիության/սահմանափակումների պայմաններում:

Այս մտքի շարունակությունը վառ տեսնում ենք այլ հեղինակների մոտեցման մեջ, ըստ որի՝ ազենտությունն ազդեցություն գործելու կարողություն է. «Մարդիկ գործում են այն ժամանակ, երբ հավատում են,

²⁰ Bandura, A. (1982). Self-efficacy mechanism in human agency. *American Psychologist*, 37(2), p. 122-147, Bandura, A. (1990). Perceived self-efficacy in the exercise of personal agency. *Journal of Applied Sport Psychology*, 2(2), p. 128-163.

²¹ Sen A. (1999). *Development as Freedom*. Oxford: Oxford University Press, p. 3.

²² Cauce A., Gordon E. W. Toward the measurement of Human Agency and the disposition to express it // https://www.ets.org/Media/Research/pdf/cauce_gordon_measurement_human_agency.pdf (08.10.2021), p. 5.

²³ Տե՛ս ավելին՝ Sen, A. (1999). նշվ. աշխ.:

որ կարող են ազդեցություն ունենալ»²⁴: Սոցիալ-քաղաքական զարգացման այս տեսության մեջ ազենտությունը դիտվում է հիմնարար առանձնահատկություն: Ընդ որում, «ազդեցություն գործելու» հանգամանքը, մեր կարծիքով, ազենտության դրսևորման կարևոր ցուցանիշներից է: Այս առումով պատահական չէ, որ խոսվում է ազենտության դրսևորման անհատական և խմբային մակարդակների մասին՝ դիտարկելով վերջինս քաղաքական, քաղաքացիական և սոցիալական ակտիվության համատեքստում²⁵:

Ազենտության դրսևորման բազմազանությունը հասկանալու տեսանկյունից կարևոր ենք համարում անդրադառնալ ևս մեկ մոտեցման: Բանն այն է, որ եթե մյուս սահմանումներում առավելապես շեշտադրվում էր անհատի ընդունակությունը՝ գործելու, ազդելու իր նպատակներին և արժեքներին համապատասխան, այս մոտեցման համատեքստում ընդգծվում է նաև մարդու տրամադրվածությունը՝ ճանաչելու և գործելու սեփական հետաքրքրություններին համապատասխան և ընտրելու ուրիշ հետաքրքրություններ: Ազենտությունը չի կարող լինել ո՛չ հնարավորություն, ո՛չ ընդունակություն՝ առանց վերջինիս ակտիվ դրսևորման: Նպատակադրված, մտադրված լինելու, գործելու հակումն այն է, ինչ նշանակում է, որ մարդն օժտված է ազենտությամբ: Ազենտությունն ու այն դրսևորելու հակումը պետք է միասին դիտարկվեն: Ըստ երևույթին դրանց փոխհատումն է թույլ տալիս չափել այն: Այլընտրանքային սահմանմամբ՝ «մարդու ընդունակությունը՝ գործելու այն բանի համապատասխան, ինչն արժեքավոր է իր համար և ունի պատճառ՝ արժևորվելու: Ազենտությունն ընդունակություն է՝ ընտրելու այլընտրանքներից և միտումնավոր ստիպելու, որ իրադարձություններն իրականանան: Վերջինս հիմնարար առանձնահատկություն է, որի հետ կապված են և որով արտահայտվում են մարդու այլ ընդունակություններ»²⁶:

Ազենտությունը միայն գործողության ներունակություն չէ: Դա չի նշանակում նաև, որ այն համընկնում է արդյունքի կամ ձեռքբերման հետ: Ակնհայտ է, որ ազենտությունը ենթադրում է որոշակի վարք կամ գործողություն: Ազենտության անձնային մակարդակն անկախ փոփոխական է, որը կարող է ցույց տալ, թե ինչքանով է անձն իր գործողությունները կազմակերպել անհատական իմաստավորման տեսանկյունից: Բավական տարբերություն կա գործողությունների անհատական պլանավորման և միջավայրային հսկողության միջև: Այս պարագայում նշում են արտաքին կամ ներքին վերահսկողության լոկուսի մասին. գործել անձնային ստանդարտներին համապատասխան կամ ուրիշնե-

²⁴ Տե՛ս **Watts, R., & Guessous, O.** (2006). Sociopolitical development: The missing link in research and policy on adolescents. In S. Ginwright, P. Noguera, & J. Cammarota (Eds) *Beyond Resistance! Youth Activism and Community Change: New Democratic Possibilities for Practice and Policy for America's Youth*. N Y: Routledge, էջ 59-80:

²⁵ Տե՛ս ավելին՝ **Alkire S.** (2005), նշվ. աշխ.:

²⁶ **Cauce A., Gordon E. W.**, նշվ. աշխ., էջ 5-6:

րի ապահովմամբ, լինել նախաձեռնող կամ տատանվել, երբ բացակայում է ամրապնդումը: Այս տարբերությունները կարող են ընդգրկել գործողությունների կանխամտածվածությունը, ինչը տատանվում է ազենտության տարբեր մակարդկաների դեպքում: Ազենտության առավել բարձր մակարդակ ունեցող մարդիկ ավելի լավ են հասկանում՝ ինչ են իրենք անում, և ավելի մեծ կայունություն են դրսևորում կոնստեքստուալ փոփոխությունների դեպքում: Ցածր ազենտությամբ մարդիկ առավել շատ են ուշադրություն դարձնում գործողությունների համատեքստին: Ազենտության մակարդակներն ազդում են գործողության պլանավորման մի շարք ասպեկտների վրա. բարձր ազենտությամբ մարդիկ հակված են իմաստավորելու իրենց գործողությունները և նրանց մտքում, ամենայն հավանականությամբ, առավել հստակ է և կայուն այն ամենի իմաստը, ինչը նրանց դուր է գալիս²⁷:

Իհարկե, մեզանից ոչ բոլորն են իրենց կենսագործունեության յուրաքանչյուր պահի հանդես գալիս որպես այն ամենի լիիրավ ազենտ, ինչ անում են՝ գործելով ազդակ-ռեակցիա մեխանիզմով: Դրա հետ մեկտեղ՝ ազենտի կարգավիճակը չի կարող բնութագրել գործող անհատին ընդհանրապես՝ առանց միջավայրի հետ կոնկրետ փոխազդեցության: Միայն գործունեության, ճանաչողության, հարաբերության, փոխազդեցության կոնկրետ իրավիճակի մասին կարելի է ասել՝ արդյո՞ք տվյալ դեպքում անհատը հանդես է գալիս այդ հարաբերության ամբողջական ազենտ, թե՞ ոչ²⁸: Ստացվում է, որ մենք որպես խնդիր գործունենք ազենտության՝ արտաքին և ներքին գործընթացների վրա ակտիվ ներազդեցության՝ ժամանակի մեջ փոփոխվող ակտիվության չափի հետ՝ ներառյալ արտաքին ակտիվության ակտիվ գսպումը: Այս պարագայում ազենտությունը ձեռք է բերում տիրույթային բնույթ, իսկ վերջինիս արտահայտվածության մակարդակը յուրաքանչյուր կոնկրետ պահի կարող է տարբերվել: Իսկ ազենտության տիրույթային բնույթի ու դրսևորման կոնկրետ իրավիճակի հաշվառումը կարևոր նշանակություն ունի վերջինիս առանձնահատկությունները հասկանալու և ուսումնասիրելու համար:

Այսպիսով, ազենտությունը՝ որպես ուսումնասիրության առարկա, բազմաչափ կոնստրուկտ է, և դրա վերլուծության և էմպիրիկ հետազոտության յուրաքանչյուր փորձում պետք է հաշվի առնվի այս հանգամանքը: Իհարկե, հոդվածում ոչ բոլոր տեսական մոտեցումներին է անդրադարձ կատարվել, բայց փորձ է արվել տարբեր տեսությունների տեսանկյունից ներկայացնելու ազենտության դրսևորման հիմնական առանձնահատկությունները:

²⁷ Sté u Vallacher R. R., Wegner D. M. (1989). Levels of Personal Agency: Individual Variation in Action Identification. *Journal of Personality and Social Psychology*, 57 (4), էջ 660-671:

²⁸ Sté u ավելին՝ Леонтьев Д. А. (2010). Что дает психологии понятие субъект: субъектность как измерение личности. *Эпистемология и философия науки*, 25, էջ 136-153:

Վերլուծությունն ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ ազենտությունն անձի կանխամտածված գործելու ընդունակությունն է՝ իր նպատակներին, արժեքներին համապատասխան: Ազենտը հանդես է գալիս և՛ որպես գործողության ընթացքի, և՛ որպես նրա արդյունքի ստեղծող, ներառված է փոխհարաբերությունների և փոխազդեցությունների համակարգի մեջ: Ազենտության դրսևորման կարևոր առանձնահատկություններից են ինտենցիոնալությունը, նպատակաուղղվածությունը, ակտիվությունը, ազատորեն ընտրելու, ազդեցություն ունենալու, սեփական գործողությունների պատճառը ցուցելու կարողությունը, վերջինիս արդյունքները կանխատեսելու և վերահսկելու ընդունակությունը: Այս իմացությունը կիրառական նշանակություն կարող է ունենալ ազենտության էմպիրիկ ուսումնասիրության և չափման մոտեցումների մշակման հարցում:

АНИ ГРИГОРЯН – “Я действую, и я знаю, что это я действую”: Что такое Агентность? Как она проявляется? – Статья посвящена анализу основных нейробиологических и психологических подходов к исследованию агентности. Приведены определения разных авторов, занимающихся данной проблемой.

Нейробиологические подходы, основанные на экспериментальных исследованиях, считают агентность результатом определенной мозговой активности, лежащей в основе произвольной двигательной активности человека. А психологические теории рассматривают агентность в более широком контексте деятельности человека с точки зрения взаимодействия с окружающей средой. Сделана попытка очертить особенности проявления агентности, что может послужить основой для эмпирического исследования.

Ключевые слова: агентность, агент, области мозга, проспективная и ретроспективная агентность, интенциональность, предвидение и контроль результатов действия

ANI GRIGORYAN – “I Act, and I know that I am the One Who Acts”: What is Agency? How is it Manifested? – The article is devoted to the analysis of the neuroscientific and psychological main approaches to the study of agency. Definitions of different authors are presented.

Neuroscientific approaches, based on experimental research, consider agency to be the result of a certain brain activity underlying the voluntary motor activity of a person. On the other hand, psychological theories view agency in the broader context of human activity in terms of interaction with the environment. An attempt has been made to outline the main peculiarities of the manifestation of agency that can serve as a basis for empirical study.

Key words: agency, agent, brain regions, prospective and retrospective agency, intentionality, prediction and control of the action outcomes